

ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արդի տնտեսավարման պայմաններում օրեցօր առավել ակնբախ է դառնում Հայաստանի Հանրապետության տնտեսությունում մեծածավալ ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը, ուստի պետության համար գերակա խնդիր է դարձել արդյունավետ ներդրումային քաղաքականության իրագործումը, իսկ այս ճանապարհին առկա են բազմաթիվ ու բազմաբնույթ հիմնահարցեր, որոնք անհապաղ լուծման անհրաժեշտություն ունեն։ Բնականաբար, ցանկացած հիմնախնդրի արդյունավետ լուծում ապահովելու համար անհրաժեշտ է կանխավ հստակ պատկերացնել դրանց էությունը, պատճառները և հիմքերը։ Այս նկատառումներից ելնելով և հաշվի առնելով խնդրի կարևորությունը, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ներդրումներ տնտեսագիտական կատեգորիայի էությունը, ներդրումների կառուցվածքը, տեսակները, դրանց անհրաժեշտությունը ինչպես ընդհանրապես տնտեսության, այնպես էլ Հայաստանի տնտեսության զարգացման համար մասնավորապես։

Ներդրումները լինում են ներքին /ազգային/ և արտաքին /օտարերկրյա/, որոնք երկուսն էլ բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ «ուղղակի ներդրումներ» և «պորտֆելային ներդրումներ»։ «Ուղղակի» են այն ներդրումները, որոնք իրականացվում են որևէ կազմակերպությունում կառավարում ձեռք բերելու նպատակով և հետապնդում են երկարաժամկետ շահեր։ Երբ կազմակերպությունը և ներդրողը գտնվում են տարբեր երկրներում, ապա տվյալ ներդրումը համարվում է «օտարերկրյա ուղղակի ներդրում»։ Օտարերկրյա ուղղակի ներդրումները միջազգային ներդրումներ են, որոնք կատարվում են մի տնտեսության գործակալի կողմից մեկ այլ տնտեսության որևէ կազմակերպությունում՝ հետապնդելով երկարատև շահ։ Ուղղակի ներդրումները լինում են բաժնետիրական կապիտալի, ռեինվեստիցիոն եկամտի և այլ կապիտալի տեսքով։

Բաժնետիրական կապիտալը ներառում է տնտեսական միավորի սեփական կապիտալը, դուստր /մեկ այլ ընկերություն տնօրինում է նրան ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի ոչ պակաս, քան 50 %-ը/ և կախյալ /երբ մեկ այլ ընկերություն տնօրինում է նրան ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20-50 %-ը/ կազմակերպությունների բաժնետոմսերը:

Ռեինվեստիցիոն եկամուտը օտարերկրյա ներդրողի կողմից ներդրված կապիտալի մասնակցությունից ստացված եկամտի չբաշխված մասն է, որը ներդրվել է օտարերկրյա ներդրումով կազմակերպությունում:

Այլ կապիտալը որպես ուղղակի ներդրում ներառում է ներֆիրմային երկարաժամկետ գործառնությունները ներդրող և ներդրումով կազմակերպությունների միջև փոխառությունների, առևտրային վարկերի, ինչպես նաև, արտոնյալ բաժնետոմսերի տեսքով:

Այն ներդրումները, որոնց արդյունքում ներդրողը ձեռք է բերում կազմակերպության ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 %-ը կոչվում են պորտֆելային ներդրումներ: Պորտֆելային ներդրումներն իրականացվում են որոշակի եկամուտ ստանալու նպատակով և դրանք համարվում են ամենացածր ռիսկային գործոն պարունակող ներդրումներ: Պորտֆելային ներդրումները լինում են կապիտալի բաժնեմասերի՝ գլխավորապես բաժնետոմսերի և պարտքի արժեթղթերի տեսքով: Պարտքի արժեթղթերը լինում են.

ա/ պարտատոմսերի և այլ երկարաժամկետ արժեթղթերի /մեկ տարուց ավել սկզբնական մարման ժամկետով/

բ/ դրամական շուկայի գործիքների /մինչև մեկ տարի սկզբնական մարման ժամկետով/

գ/ ֆինանսական ածանցյալների / օպցիոններ, վարանտներ/ տեսքով:

Միջազգային արժույթային հիմնադրամը (IMF) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD) ընտրել են որպես չափանիշ 10 %-ը, քանի որ այն համարվում է նշանակալի մասնակցություն, եթե ոչ վերահսկման, ապա կազմակերպության կառավարման գործում, և որը համապատասխանում է միջազգային ներդրումների հաշվարկման բնագավառում շատ երկրներում կիրառվող

պրակտիկային: Օտարերկրյա ներդրումները սահմանվում են որպես կապիտալ ներդրում, որը նպատակ է հետապնդում ձեռք բերել ամբողջական կամ նշանակալից վերահսկում օբյեկտի գործառնության վրա, մինչդեռ պորտֆելային ներդրումներն այդպիսի վերահսկում չեն ենթադրում: Ուղղակի ներդրումների հիմնական առանձնահատկությունը ներդրողին տվյալ ձեռնարկության կառավարման մեջ արդյունավետ ծայնի իրավունքի ապահովումն է:

Սակայն, պետք է նկատի ունենալ, որ վերը նշված սահմանը ուղղակի և պորտֆելային ներդրումների միջև շատ դեպքերում պայմանական է, քանի որ հաճախ կառավարչական վերահսկման հնարավորություն կարող է ընձեռել կազմակերպության բաժնետոմսերի ոչ մեծ քանակը, հատկապես, եթե կազմակերպության սեփական կապիտալը բաժանված է մեծ թվով բաժնետերերի միջև, կամ երբ կապիտալի ոչ մեծ մասի բաժնետիրոջն է պատկանում կազմակերպության համար ռազմավարական կարևորության տեխնոլոգիան:

Օտարերկրյա ներդրումներն իրականացվում են հետևյալ ձևերով. օտարերկրյա ներդրողներին ամբողջությամբ պատկանող կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց պատկանող բաժանմունքներ, մասնաճյուղեր, ներկայացուցչություններ ստեղծելու կամ գործող կազմակերպությունները որպես սեփականություն ձեռք բերելու միջոցով.

ՀՀ իրավաբանական անձանց և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների կամ ՀՀ քաղաքացիների մասնակցությամբ նոր կազմակերպություններ հիմնելու կամ գործող կազմակերպություններում բաժնեմաս ձեռք բերելու միջոցով.

բաժնեմասեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր ձեռք բերելու միջոցով.

գույքային այլ իրավունքներ ձեռք բերելու միջոցով.

համապատասխան պայմանագրերով վարկերի կամ փոխառությունների տրամադրման և այլ ձևերով:

Ներդրումների ֆինանսավորման աղբյուրներ են.

ներդրողի սեփական ֆինանսական միջոցները՝ շահույթ, ամորտիզացիոն մասհանումներ, դրամական խնայողություններ և այլն.

բանկերից ստացվող փոխատվական միջոցները՝ արժեթղթային փախատվություններ, վարկեր.

սեփականաշնորհված կազմակերպությունների բաժնետոմսերի վաճառքից գոյացած միջոցները.

ներդրումային նախագծերի հիման վրա արտասահմանյան ներդրումները:

Տնտեսագիտության մեջ գոյություն ունեն ներդրումների բազմաթիվ դասակարգումներ: Այսպես, Գ. Մենքյուն ներդրումները դասակարգում է երեք խմբերում¹

ներդրումներ կազմակերպության հիմնական ֆոնդերում

ներդրումներ բնակարանային շինարարությունում

ներդրումներ պահուստներում

Ազգային հաշիվների համակարգում վճարային հաշվեկշռի տեսանկյունից, IMF-ի առաջարկած մեթոդաբանությամբ, ներդրումները բաժանվում են ըստ տեսակի երեք խմբի՝ ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումներ: Վերջին խումբը դրանք այն ներդրումների մնացած մասն է, որը ներառում է բոլոր տեսակի ֆինանսական գործառնությունները, որոնք չեն ընդգրկվել ուղղակի և պորտֆելային ներդրումներում: Այլ ներդրումները լինում են փոխառությունների, վարկերի՝ դրամական և առևտրային /բացի օտարերկրյա ներդրումով կազմակերպության ստացվածն իր անմիջական ներդրող կազմակերպությունից, որն ուղղակի ներդրում է/, դեպոզիտների և այլնի տեսքով: Այս դասակարգումն է ընկած միջազգային ներդրումային դիրքի կազմման և հաշվարկման հիմքում: Ընդ որում հարկ է նշել, որ ԴՀ-ում առաջին անգամ ԴՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից 1998թ-ից սկսած հաշվարկվում է ԴՀ միջազգային ներդրումային դիրք՝ IMF-ի առաջադրած մեթոդաբանության դրույթներին համապատասխան: Վերջինս իր ուրույն տեղն ունի բոլոր զարգացած պետությունների ներդրումային քաղաքականության և

¹ Г. Менкю, Макроэкономика, сс 638-639, Москва, 1994

արտաքին հարաբերությունների իրականացման ռազմավարության մեջ և ՀՀ-ում արդյունավետ ներդրումային քաղաքականության ապահովման երաշխիքային պայմաններից մեկը կարող է հանդիսանալ: Ուստի խիստ կարևորվում է այս հարցի հետագա կատարելագործման և բարելավման նշանակությունը, քանզի ՄՆԴ-ում պարզորոշ ուրվագծվում է ՀՀ ակտիվների և արտաքին աշխարհի նկատմամբ ունեցած պարտավորությունների հարաբերակցությունը ինչպես տնտեսության այնպիսի հատվածներում, ինչպիսիք են դրամա-վարկային կառավարման մարմինները, պետական կառավարման հատվածը, բանկերը և այլ հատվածը, այնպես էլ իրականացված գործառնությունները և զենքի և տարադրամի փոխարժեքի փոփոխությունները: Ամերիկայի Միացյալ Նահանգների ողջ ներդրումային քաղաքականության հիմնաքարը Միջազգային ներդրումային դիրքի մանրամասն վերլուծությունն է, որը յուրաքանչյուր տարի իրականացվում է ԱՄՆ-ի առևտրի նախարարության Տնտեսագիտական վերլուծության գրասենյակի կողմից: ՀՀ-ում ամենամյա ՄՆԴ-ի հաշվարկի առկայությունն էապես կբարելավի ներդրումների իրականացման գործընթացը, հնարավորություն կտա խուսափել այս բնագավառում արդեն իսկ տեղ գտած որոշ թերություններից:

Ներդրումներն ըստ ժամկետայնության բաժանվում են երկու խմբի՝ երկարաժամկետ և կարճաժամկետ ներդրումներ: Մեկ տարուց ավել մարման ժամկետով փոխառությունները համարվում են երկարաժամկետ, իսկ մինչև մեկ տարի մարման ժամկետով փոխառությունները՝ կարճաժամկետ:

Ներդրումներն իրականացվում են իրական և ֆինանսական հատվածներում: Իրական հատվածում իրականացված ներդրումներն ուղղված են իրական կապիտալի վերականգնմանը, հիմնական միջոցների և դրանց հետ կապված շրջանառու կապիտալի վերարտադրությանը: Մասնավորապես, նոր շինարարության, վերակառուցման, գործող արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, առևտրային և այլ կազմակերպությունների տեխնիկական վերազինման, բնակարանային և կոլտուր-կենցաղային շինարարության համար:

Ֆինանսական հատվածում ներդրումներն իրականացվում են դրամական միջոցների տեսքով, բանկային ներդրումների, փայերի, բաժնետոմսերի և այլ արժեթղթերի, անշարժ և շարժական գույքի, մտավոր սեփականության, սեփականության իրավունքի և այլ արժեքներում ներդրված կապիտալի տեսքով:

Առաջարկում ենք ներդրումները տարբերակել ևս երկու տեսանկյուններից՝ քանակական /քստենսիվ/ և որակական /ինտենսիվ/: Ինտենսիվ են այն ներդրումները, որոնք ներդրվում են, նպատակ ունենալով ապահովել կազմակերպության տեխնիկական բարելավումն առավել արդյունավետ տեխնոլոգիաներով, կառավարման ունակություններով, առաջատար փորձի ներդրմամբ որակական բարձր ցուցանիշներ:

Էքստենսիվ են այն ներդրումները, որոնք ներդրվում են՝ նպատակ ունենալով տեխնիկական մակարդակի պահպանմամբ ապահովել արտադրանքի ծավալի աճ /քանակական բարձր ցուցանիշներ/:

Ներկա պայմաններում մեր հանրապետության տնտեսության համար բոլոր տիպի ներդրումներն էլ մեծ կարևորություն են ներկայացնում, սակայն, նկատի ունենալով այն փաստը, որ Հայաստանը մախկին խորհրդային վարչա-հրամայական համակարգից ժառանգել է առավելապես հին ու մաշված հիմնական միջոցներ, ուստի արդի փուլում առավել կարևորվում է նախ և առաջ ինտենսիվ ներդրումների ապահովումը, որոնց արդյունքում հանրապետությունը կունենա ժամանակակից և նորագույն տեխնոլոգիաներով հագեցած կազմակերպություններ՝ որակավորված մասնագետներով /նկատի ունենք նաև ներդրումները մարդկային կապիտալում, որը չնայած այն հանգամանքին, որ հանդիսանում է գրեթե ամենաերկար հետզմում պահանջող կապիտալի տեսակ, այնուամենայնիվ, շարունակում է մնալ որպես առաջնահերթ որակական ցուցանիշ ապահովող միջոց/, ժամանակի պահանջներին համահունչ կառավարման հմտություններով աշխատող կազմակերպություններ, որոնք որակական նոր մակարդակի կբարձրացնեն Հայաստանի Հանրապետության տնտեսությունը և որպես արդյունք՝ կապահովեն միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ

ապրանքներ, որից հետո միայն հրատապ կղաճնա մաև էքստենսիվ ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումային քաղաքականությունն իրականացվում է համաձայն 1994թ ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի: Այսօր արդեն այս ոլորտում զգացվում է օրենսդրական դաշտի բաց և, այս առումով, բավականին կարևորվում է նոր՝ «Ներդրումների մասին» օրենքի ընդունումը, քանզի ՀՀ տնտեսության համար մեծ կարևորություն են ներկայացնում ոչ միայն օտարերկրյա, այլև ներքին /ազգային/ ներդրումները: Անվիճելի է այն փաստը, որ ՀՀ-ում ներկայումս ներքին ներդրումները բավականին փոքր բաժին են կազմում, որը, մախ և առաջ, օրենսդրական դաշտի անկատարության հետևանք է: Հայաստանի Հանրապետությունում բնակչության ծանր սոցիալական վիճակը նույնպես լուրջ խոչընդոտ է այս հարցում, և նույնիսկ եղած փոքրածավալ ներդրումների համար չկան համապատասխան երաշխիքներ և, ինչու ոչ, մաև հարկային խթաններ: Նշյալ հանգամանքները "պարարտ հող" են ստեղծում երկրից ազգային կապիտալի արտահոսքի համար: Պորտֆելային ներդրումների գրեթե բացակայությունը /ՀՀ կազմակերպություններից միայն «Սիգարոն» ընկերությունն ունի չնչին քանակով պորտֆելային ներդրում/ ցայտուն փաստարկն է այն իրավիճակի, որ ՀՀ-ում դեռևս ձևավորված չեն կապիտալի և արժեթղթերի շուկաները, իսկ պետական պարտատոմսերի եկամտաբերությունն ընդամենը 40% է, ինչն արդեն իսկ կասկածի տակ է դնում այն հարցը, թե արդյոք որևէ գործարար նպատակահարմար կգտնի իր կապիտալը ներդնել ՀՀ տնտեսության որևէ կազմակերպությունում: Հայաստանի Հանրապետությունը միարժեքորեն դեռևս շարունակում է մնալ բարձր ռիսկային գոտի ներդրումների ներգրավման համար: Ներդրումային բարձր ռիսկայնության նվազեցման առաջնահերթ միջոցառումը պետք է լինի ներդրումների ապահովագրման իրականացումը, որը պետք է սկսել բարենպաստ օրենսդրական դաշտի կատարելագործմամբ, համապատասխան ենթակառուցների ստեղծմամբ: Ընդ որում, համարժեք պայմաններ պետք է ստեղծել և՛ ազգային, և՛ օտարերկրյա ներդրողների համար: Առայժմ Հայաստանի Հանրապետությունում գործող մոտ 70

ապահովագրական ընկերությունները դեռևս չեն ստեղծում ընդհանուր
ներդրումային ռիսկի նվազեցման մթնոլորտ: Հայաստանի Հանրապետության
ներդրումային քաղաքականության վրա ուղղակիորեն նկատելի
ներգործություն է ունեցել Հայաստանի Հանրապետությունում իրականացված
սեփականաշնորհումը, որն ի սկզբանե զերծ էր սխալներից: Արդյունքում
սեփականաշնորհման գործընթացի հետևանքները բացորոշ են ՀՀ
տնտեսության մեջ: Փաստորեն, սեփականաշնորհման գործընթացն
իրականացվեց այն ժամանակ, երբ ՀՀ-ում դեռևս չկար արժեթղթերի շուկա: Ի
հետևանք այդ հանգամանքի՝ սեփականաշնորհման սերտիֆիկատները
մասսայականորեն վաճառվեցին իրենց անվանական արժեքով, դրանով իսկ
նպաստելով խոշոր մասնավոր կապիտալի կուտակմանը բնակչության չնչին
մասը կազմող հատվածի մոտ: Այս հանգամանքը ևս իր բարենպաստ լուծման
ունեցավ բնակչության սոցիալական շերտերի խիստ բևեռացմանը, ինչպես նաև
հասարակությունում միջին խավի գրեթե վերացմանը, ինչը խորհրդային
տարիներին կազմում էր բնակչության մոտ 80%-ը: Իսկ միջին խավը ցանկացած
առողջ հասարակության կայունության և բնականոն զարգացման հիմքն է:
Համաձայն Համաշխարհային Բանկի աջակցությամբ ՀՀ վիճմախարարության
կողմից 1998-1999թթ իրականացված «Տնային տնտեսությունների
ամբողջացված հետազոտություն» ծրագրի արդյունքների, 1999թ Հայաստանի
Հանրապետությունում 20% ամենաշատ և 20% ամենաքիչ ապահովված
բնակչության եկամուտների հարաբերակցությունը կազմել է 32.2 անգամ:
Հետաքրքրական է այն փաստը, որ նույն ցուցանիշն ըստ ծախսումների կազմել
է 6.6 անգամ, ինչը վկայում է այն մասին, որ հարուստ բնակչության
եկամուտների որոշ մասն ուղղվում է խնայողություններին և վերջիններս
բարենպաստ պայմանների առկայության դեպքում կարող են դառնալ ներքին
ներդրումների հուսալի աղբյուր: Նման պարագաներում ՀՀ տնտեսությունում
գրանցված ազգային ներդրումների փոքր կշիռը կոչման է այն իրողության, որ
բնակչությունը գերադասում է խնայողությունները պահել «տանը», քան
ներդնել տնտեսությունում: Բնակչության նման հակվածությունը
պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով,
մասնավորապես՝ պետության նկատմամբ անվստահությունը, ազգային

ներդրումների համար բարենպաստ պայմանների բացակայությունը, բավարար չենք որմացիայի սակավությունը և այլն:

Հարուստ բնակչության եկամուտները մոտ հինգ անգամ գերազանցում են սպառումը /32.2 : 6.6/, այսինքն եկամուտների 4/5 մասն ուղղվում է խնայողություններին, և միայն 1/5 մասը՝ սպառմանը: Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունում ներքին ներդրումների իրականացման համար կա մեծ ներուժ /պոտենցիալ/: Առկա է խնայողությունների /S/ որոշ մակարդակ, որը չի ներդրվում տնտեսության մեջ, հետևաբար չկան համապատասխան խթաններ այդ գործընթացի իրականացման համար, և բնակչությունը գերադասում է լավագույն դեպքում դրամական կապիտալը պահել բանկային հաշիվներում և ստանալ եկամուտ՝ բանկային տոկոսադրույքի տեսքով: Ուստի, որպեսզի խնայողությունները դառնան ներդրումներ, անհրաժեշտ է, որ ներդրված կապիտալի նվազագույն եկամտաբերությունը համարժեք լինի բանկային տոկոսադրույքին՝ $r > r_p$:

(Հաիւթի նորմա - քանկահն %) x ներդրված կապիտալ
100 x շահութահարկի տոկոսադրույք

Նման պայմաններում ազատ կապիտալի սեփականատերն աստիճանաբար կսկսի դրսևորել կապիտալն ազգային տնտեսությունում ներդնելու միտում: Այսպես, ֆիզիկական անձն ունի 500000 դրամ ազատ կապիտալ, որը բանկում ներդնելով իրեն կապահովի ամսական $500000 \cdot 4\% = 20000$ դրամ եկամուտ: Նույն գումարն ուղղակի կամ պորտֆելային ներդրում իրականացնելու հետևանքով ամսական 10% շահույթի նորմա ապահովելու դեպքում ներդրողը կվճարի շահութահարկ՝

$$\frac{10-4}{100} \times 500000 \times 30\% = 9000 \text{ դրամ}$$

Առաջարկված հարկային խթանը բարենպաստ պայման կարող է դառնալ ազգային ներդրումների խթանման համար: Այն նաև նվազեցնում է ներդրումային ռիսկը, ապահովում է բյուջետային մուտքեր: Հարկային համակարգում միայն օտարերկրյա ներդրողների համար ներկայում գործող հարկային արտոնություններն առիթ են տալիս, որպեսզի ներքին ներդրողն այլ ուղիներ փնտրի իր ազատ կապիտալը օտարերկրացու միջոցով Հայաստանում ներդնելու և նրանց համար սահմանված արտոնություններից օգտվելու

համար: Նման կարգի անհարկի սողանցքներից խուսափելու համար անհրաժեշտ է այս բնագավառում չամտեսել ազգային ներդրողների շահերը և համապատասխան պայմաններ ստեղծել նրանց համար ևս:

Մյուս կողմից բնակչության բեռնացվածության նվազումն ըստ ծախսերի ենթադրում է, որ աղքատ բնակչությունը ծախսում է ավելի շատ, քան ստանում է: Դա հետևանք է մի շարք պատճառների: Նախ՝ բնակչությունը որոշակի գումարներ է ստանում արտերկրից, որն առկա սփյուռքի և միգրացիայի պայմաններում ցավալիորեն բնական է դարձել: Բնակչության զգալի մասը «դրսում» է դրամ վաստակում, քանի որ Հայաստանի Հանրապետությունում աշխատուժը շատ էժան է: Որքան էլ որ այս հարցը հիմնախնդրային է Հայաստանի Հանրապետությունում, և անհապաղ լուծման կարիք ունի, այստեղ օտարերկրյա ներդրողների շահերը կիզակենտվում են և էժան աշխատուժը թերևս եղել և շարունակում է մնալ որպես օտարերկրյա ներդրումների ներգրավման ամենահիմնական և անփիճելի գրավականներից մեկը: Այս առումով էժան աշխատուժը երկփեղկված իմաստավորում է ստանում ազգային և օտարերկրյա ներդրողների տեսանկյուններից: Բնական է, որ այս պարագայում ՀՀ կառավարության գործունեությունը չպետք է միաթեքորեն միտված լինի զուտ ներդրողների շահերի պաշտպանությանը, այլ այն պետք է իրականացվի բնակչության ընդհանուր կենսամակարդակի բարելավման ապահովման համատեքստով: